# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«23» օգոստոսի 2023թ.                                        N ՄՈ/368-Ա

ք. Արմավիր

### ԺԱՆՆԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ «ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-ով կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2023 թվականի օգոստոսի 22-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ժաննա Արզումանյանին:
2. Ժաննա Արզումանյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.08.2023 15:55:11 GMT+4

**ՄԱՐԶՊԵՏ՝**          Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**